ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՓԱՐԻԶ–2024 ԱՄԱՌԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը

ՀՎՀՀ 02512868, գրանցման համարը 286.180.05159, նստավայրի հասցեն՝ ՀՀ, Երևան, Վազգեն Սարգսյան փողոց 3, Կառավարական տուն 2, սույն Հուշագրում այսուհետև «Նախարարություն», **ի դեմս նախարար պարոն Վահրամ Դումանյանի.**

և

«Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» հասարակական կազմակերպությունը

գրանցված Հայաստանի Հանրապետությունում, ՀՎՀՀ 02515951, գրանցման համար 211.171.1057612, նստավայրի հասցեն՝ ՀՀ, Երևան, Աբովյան փողոց 9, սույն Հուշագրում այսուհետև «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե», **ի դեմս նախագահ պարոն Գագիկ Ծառուկյանի.**

Ղեկավարվելով

– բարձրակարգ մարզիկների պատրաստման, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովման.

– պետական ծրագրի միջոցով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգի կատարելագործման.

– օլիմպիզմի գաղափարների պահպանման և տարածման

պետական քաղաքականության սկզբունքներով.

Կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն ստանձնում է հետևյալ պարտականությունները՝ Փարիզ–2024 ամառային օլիմպիական խաղերի

նախապատրաստման 2022-2024 թվականների փուլային ծրագրի կազմման և իրագործման հետ կապված՝

1.1 Ծաղկաձոր քաղաքի նախկին Գլխավոր մարզահամալիրի 3-րդ մասնաշենքը 30 տարով անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեին հանձնելու դեպքում, այն ամբողջությամբ հիմնանորգել մեկ տարվա ընթացքում և դրա կառավարումը և շահագործումը իրականացնել Հայաստանի Հանրապետության և Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հավասար մասնակցությամբ առևտրային կազմակերպության միջոցով:

1.2 Յուրաքանչյուր տարի՝ սկսած 2022 թվականից մինչև 2024 թվականը ներառյալ, մեկից երկու մարզադպրոց՝ այդ թվում սահմանամերձ, հիմնանորոգել:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից, ստանձնում է հետևյալ պարտականությունները՝ Փարիզ–2024 ամառային օլիմպիական խաղերի նախապատրաստման 2022-2024 թվականների փուլային ծրագրի կազմման և իրագործման հետ կապված՝

2.1 Ապահովել անհրաժեշտ մասնագիտական մարզագույքով՝ սույն Հուշագրի 1.1 և 1.2 կետերով նախատեսված և Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի կողմից հիմնանորոգված մարզակառույցները:

3. Հուշագրով նախատեսված Փարիզ–2024 ամառային օլիմպիական խաղերի նախապատրաստման 2022-2024 թվականների փուլային ծրագրի պաշտոնական սկիզբը 2022 թվականի բյուջետային տարվա սկիզբ:

4. Հուշագրով նախատեսված Փարիզ–2024 ամառային օլիմպիական խաղերի նախապատրաստման 2022-2024 թվականների փուլային ծրագրի պաշտոնական ավարտը 2024 թվականի օգոստոս ամիս:

Հուշագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Փարիզ–2024 Ամառային օլիմպիական խաղերի մեկնարկը:

Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ:

Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե**
Նախարարի տեղակալ	**Գլխավոր քարտուղար**
Կարեն Գիլոյան	**Հրաչյա Ռոստոմյան**